ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**ANQA-2021/52**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 հունիսի 2021 թ. N 52**

## ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին**

Հաստատության լրիվ անվանումը՝ «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Հովհաննիսյանի

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հունիսի 19-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում, քննարկեց Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ ՇՏՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՇՏՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

**Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.**

| | |
|---|---|
| դիմում-հայտի ներկայացում՝ | 18 հունվարի 2019թ. |
| վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ | 15 հուլիսի 2019թ. |
| փորձագիտական այցի իրականացում՝ | 11-14 նոյեմբերի 2019թ. |
| փորձագիտական զեկույցի ներկայացում՝ | 24 օգոստոսի 2020թ. |
| թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ | 9 սեպտեմբերի 2020թ. |

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը1: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Հետազոտություն և զարգացում»**, **«Ենթակառուցվածք և ռեսուրսներ»**, **«Արտաքին կապեր և միջազգայնացում»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»**, գնահատվել են անբավարար, մյուս ոլորտներում չնայած իրականացված փոփոխություններին դեռևս բարելավման անհրաժեշտություն կա:

1. ***Առկա են որակավորումների արժանահավատ շնորհման առաջխաղացման միտումներ և օրինակներ, սակայն կան նաև որոշակի ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորհման որակի ապահովման տեսանկյունից.***

Առկա է մասնագիտական կրթական ծրագրերի հաստատման կարգը: Համալսարանի կողմից առաջարկվող մասնագիտության կրթական ծրագրերում հստակ սահմանված է նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները, որոնք համահունչ են համալսարանի առաքելությանը: Կրթական ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը կազմվել է հիմնվելով հայաստանյան առաջավոր բուհերի համանման կրթականն ծրագրերի վերլուծությունների վրա:

Առկա է վերջնարդյունքահեն մոտեցումը, որի շրջանակում իրականացվել է նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանեցում, որը սակայն հստակեցման կարիք ունի: ՇՏՀ-ի ուսանողների գնահատման միասնական համակարգի վերլուծություն չի իրականացվել: Առկա չեն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման չափանիշներ, ինչը ռիսկային է դարձնում գնահատման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, որակավորումների շնորհման արժանահավատությունը:

ՇՏՀ-ի ՌԾ-ում կարևորվում է դասախոսական կազմի համալրման, գնահատման և կատարելագործման երկարաժամկետ ծրագրի մշակումը և դասախոսների համար համապատասխան պայմանների և խթանոթղ մեխանիզմների ստեղծումը: Թեև պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրման գործընթացները և համապատսխան աշխատանքային պայմանների ստեղծումը գտնվել է համեմատաբար բավարար մակարդակի վրա, սակայն դրանց գնահատման, որակավորման բարձրացման ծրագրերի մշակման, ինչպես նաև խթանող մեխանիզմների ստեղծման և ներդնման գործընթացներ չեն իրականացվել: Բուհը վարում է ՊԴ կազմի երիտասարդացման քաղաքականություն: Դասախոսների մեծ մասը ՀՀ-ից հրավիրյալ և ժամավճարային հիմունքերով աշխատողներ

են: Գերակշռում են կարճաժամկետ աշխատանքային պայմանագրերով աշխատողները: Բուհն ունի ՊԴ կազմի կայունության ապահովման խնդիր և ներկայումս այդ խնդիրն առավել սրված է օբյեկտիվ պատճառներով: Նյութատեխնիկական և ռեսուրսային ապահովումը հիմնախնդիր է այս պահին, չնայած Արցախյան կառավարության հավաստիացումներին:

2. *Առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը, սակայն արդյունքահեն կառավարումն ու որակի ապահովման համակարգը կայացման փուլում են.*

ՇՏՀ-ն առաջնորդվում է 2016-2021թթ. Ռազմավարական ծրագրով (ՌԾ): համալսարանի ներկայիս կազմակերպական կառուցվածքը և կառավարման համակարգը հիմնականում ապահովում են համալսարանի գործունեության և ռազմավարական նպատակների իրականացումը, որակավորումների արժանահավատ շնորհումը: ՇՏՀ-ն իր ՌԾ-ի 1-ին նպատակում կարևորում է որակի ներքին ապահովման համակարգի ներդնումը: Որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Թեև մշակված է որակի ներքին ապահովման քաղաքականություն, սակայն խիստ սահմանափակ են դրա իրականացման մեխանիզմները և ընթացակարգերը, որակի ներքին ապահովման սկզբունքները դեռևս չեն վերածվել կոնկրետ գործընթացների:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.*

ՇՏՀ-ի ՌԾ-ում հստակեցված չեն հետազոտական գործունեության ուղղությունները, գնահատված չեն տվյալ ոլորտում մարդկային և նյութական ռեսուրսների առկայությունը: Հետազոտական ծրագրերում բացակայում է աշխատանքների պլանավորումը, չկան ծրագրերի իրականացման պատասխանատուների, ժամկետների, ռեսուրսների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ տվյալներ: ՇՏՀ-ը լուրջ անելիքներ ունի նաև հետազոտական աշխատանքների միջազգայնացման ուղղությամբ:
Համալսարանում որոշակի փորձեր են արվում հետազոտական և ստեղծագործական միջավայրի ստեղծման ուղղությամբ: Կան պլանավորված գիտահետազոտական և գյուտարարական նախաձեռնություններ: Սակայն դրանց իրականացումը լաբորատոր բազայի բացակայության պայմաններում դժվար է գնահատել: ՇՏՀ-ն սերտորեն համագործակցում է հայաստանյան բուհերի հետ:

4. Առկա են առանցքային թերություններ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև բարելավման միտումներ:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի կողմից ներկայացված նախնական ծրագրում հիմնականում ներառվել են բոլոր խորհրդատվությունները և դրանցից մի քանիսն արդենիսկ իրականցվել են, սակայն ստեղծված հետպատերազմական իրավիճակում դժվար է կանխատեսել ծրագրի ամբողջական իրականացումը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

## ՈՐՈՇԵՑ

**1. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

ա) **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական ցուցիչներ և թիրախային նպատակներ ունենալու պահանջը,

գ) բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,

գ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.

ա) Մասնագիտության կրթական ծրագրերի, իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատմանը ու բարելավմանը,

բ) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

գ) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

դ) ՊԴ կազմի ձևավորման սկզբունքներին և կայունության խնդիրներին,

ե) հետազոտական գերակայությունների վերհանմանը, միջազգայնացման ռազմավարության ձևավորմանը,

զ) որակի ներքին ապահովման կայուն համակարգի ստեղծմանն ու շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՇՏՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

**Հավատարմագրման Հանձնաժողովի**
**նախագահ** **Ա. Սաղյան**
2021 թ., հունիսի 19
ք.Երևան